

591.99

4-47





ՎԵՍՊԵՐ

# ԿԱՅԱՐԱՆՆԵՐ

891.99  
Վ-47


1925 — ԹԻՖԼԻՍ



09 AUG 2013

57533

12 MAR 2011



*Handwritten signature*

Главлит № 628

Тифлис

Тираж 1000

Թիֆլիս ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. բաժնի 4-րդ առկ., Պուշկ. փող. № 3.

## Մ Ո Ւ Տ Ք

Տասնամյակի մը ընթացքին՝ զանազան թերթ ու պարբերականներու մեջ հրատարակված, իսկ ըզմաթիվները դեռ յեվս անտիպ քանաստեղծութիւններու մեկ մասը՝ այսօր միայն ընթերցողներու ներկայացնելու առիթը կունենամ:

— Այն, այսօր միայն:

Վորովհետեւ Այսօր այն ոըն և, յերբ խաղաղութեան յեվ ուժի լայն թեւ մը,—մեր կյանքն ու կուլտուրան հսկող, կը հովանավորի մեր հողն ու աշխատանքը:

Յերբ սուրն ու սարսափը չկան:

Յերբ Հայաստանը շարաթներու ընթացքին՝ տարիներով մեծնայն կը ձգտի:

Գուցե ուշացեր եմ յես:—Ճիշտ ե: Սակայն ինչպես ամեն հասարակական յերեվոյթը, այս ուշացում-յերեվոյթն ալ՝ իր պատճանն ունի:

Ասկե հետո՞ յես կաշխատիմ հասնիլ...


Իսկ մինչ այդ, հարկ ե վոր զբասեր հասարակութիւնը ոգնութեան փութա այս յեվ նման անհատական հանդգնութիւններու:

ՀԵՂԻՆԱԿ

1925 թ. Ապրիլ 15

(ԹԻՓԼԵՍ)

Մ Ա Յ Ր Ե Ն Ի



Յ Ե Ր Գ Ե Ր

Ա.

ՎԱՆ—ՅԵՐԵՎԱՆ

(912 - 918)





## Ա Հ Ա Գ Ա Ր ՈՒ Ն...

— Ահա գարուն... վողողեց ան ուղիներն մուժ ու խավարին  
Կանանչներով, կակաչներով, հարսնուկներով հրդեհավառ,  
Ու թիկնաբարձ, մեռելին պես, ծերուկ ձմեռն առին-տարին  
Յերկու կարիճ գարուն տղա՝ դարերն ի վա՛ր, ձորերն ի վա՛ր...

Յերբ ջուրերու գալարափողն հնչեց՝ կանչեց ամեն հողի,  
Լեցուց սրտերն աշխուժով նոր հողվորներուն ու հոտաղին,  
— «Ահա՛ գարուն, ահա՛ գարնան հրահանդես, յեկեք՝ վտաքի,  
Ու թող սարսին ձեր Ուժին տակ կուրծքը հողին, ընդերքն  
հողին...»:

... Ու հեռավոր ու մոտակա հեռաստաններն ըրին հանդես,  
Յե՛վ խմեցին բոցն Արևին, ինչպես աշնան պուրպուր-զինին,  
Հետո հարբած՝ կատաղորեն, կարոտավառ, կարոտակեզ  
Ու տաղերով՝ հանուն Հացին՝ կովի գացին, կովի գացին...

Իսկ յես՝ նստա յեզերքը լույս մեկնողներու խայտուն  
ձամբուն,

— Յես հեզ տղա, տժգո՛ւյն տղա, սրնգահար դողո՛ւն տղա—  
Նվագելու ցնծերգությունն իրենց Յերթին... ու մրափուն  
Լսել գաղտնիքն հովի յերզին, հովի ձայնին, դաշտի ձայնին:

## Դ Ե Պ Ի Ա Ր Տ

Հորս հիշատակին

Հացը շաղկեր քույրս ու յես՝  
Արտը կերթանք մութլուսուն.  
Կերթանք զովուն՝ զվարթուն,  
— Յես ու քույրըս լուսերես:

Հայրս... կայներ ե անա՛  
Զմրուխտին մեջ ուռճացած.  
Մերկ վոտներով, կուրծքը բաց,  
Բանն ալ ուսին յերկաթյա:

Կը սպասե ան՝ ջուրերուն  
Կատարներեն խոյացող,  
Աչքերն ալ խոր՝ ծրխացող  
Ծուխերուն ե վոլորուն:

Կայներ ե հաղթ ու հպարտ՝  
Պաղ ջրբին մեջ զըմզըմբուն.  
Ու կը սպասե Արևուն՝  
Վոր վողողե ասին ու արտ...

\*  
\* \*

Յանված արտիկ մեռնիմ, հայր,  
Արտիկ՝ բերքով բարեբեր,  
Արտիկ՝ հովեն տարուբեր,  
Արտիկ՝ գետի պես վարար:

Հույսիդ մեռնիմ՝ դարերու  
Մեր պապերեն կտակված.  
Քու վաղերուն բոցարծարծ՝  
Բոց-փարսուր ծովերու:

Բազուկներուդ մեռնիմ, հայր,  
Հուժկու, ջրուտ, ջրապինդ,  
Այրվող ճակտիդ, քրտինքիդ՝  
— Մեռնիմ, հայր իմ հողավար:

## Յ Ն Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նորեն այգը կը հորդի, կը կաթնոտի չորս-բոլոր,  
 Հպարտ աքլոր կը կանչէ յերեկվան պես ուժգնորեն,  
 Նորեն հզոր Արեգակ կիջնէ հրակ դուռներեն,  
 Նորեն ուժերը աշխույժ՝ կայեկոծեն սար ու ձոր  
 Ու գետերը կը զընգան ձորակներեն Ծաղկածոր...

Նորեն ծուխ ու ծխրտում ծխաններեն կոլորի,  
 Ջայն ու ծիծաղ, ցնծություն... տունը բոլոր զարթեր են.  
 Նորեն խմոր են շողղեր նոր հարսները լուսեղեն.  
 Մամիկը հաց պիտ թխե ինչպես լոշերն յերբեմնի,  
 Այնքան ճերմակ՝ վոր լույսը անոնց առջև նվաղի:

Նորեն ճամբան են բռներ, նորեն աղբյուրն են բռներ  
 Աղջիկները չինարի, վարսերուն տակ վիժանուտ.—  
 Թռան, թռան թռչնիկներ,—պլպուլ, սարեկն ու արտույտ.  
 Անոնք վորոնք Մարսափեն դարձեր եյին բնավեր՝  
 Այսոր դարձեր են նորեն՝ մեր Աշխարհը զարգարեր:

Նորեն ջուրերը կիջնեն ձյունհալեն վերջ գարունի՝  
 Զրելու խոտ ու խոտնոց, պարտեզները թարմագեղ.  
 Կանաչեր ե անտառակ, սարալանջը, ամեն տեղ,  
 Ծաղկեր են վարզն ու շուշան, կակաչները արյունի.  
 Ծաղկեր են ճար ու ճամբան, յեղրեանին գետեզրի:

Նորեն կանցնին կտրիճներն հաղթահասակ՝ մեր գեղին,  
 Կերթա հովիվն հոտավոր՝ արոտները դալարուն,

Կերթա սարակը բահվոր՝ փորելու հողը բեղուն,  
 Կերթա գութանը փայլուն՝ պատռելու սիրտը հողին,  
 Կերթա հողվորը ժպտուն՝ աչքերն հառած Անհունին...

Կերթան յեգները մարալ, գոմեշները հաղթաքայլ.  
 Ջանգալները վիզերնեն զըրընգալեն կը գնգան,  
 Ուլունքները կը շողան ցուքերուն տակ դյուլթական.  
 Բանջրվորներն ալ կանցնին մեղարներով ծալ ի ծալ.  
 Լաճ մը անա սևաչվի՝ դար-վեր հանեց ճռան սայլ:

Նորեն ծերուկ մ'ե նստեր քարին վրա ջաղացի,  
 Թութունի տուփն ե բացեր ալրաթաթախ ու ալրոտ,  
 Գամբռ մ ալ փարթամ՝ կայներ ե կը դիտե մեն մի անցորդ,  
 Մերթ ձայն կառնե սրինգին՝ վոր հեռավեն կը հասնի,  
 Մերթ հոտն անուշ կլորձին՝ վոր ջաղացեն կը փրթի:

Աշխատանքի Դիցուհին այս ժամերեն հոգեթով՝  
 Կանցնի ամեն վայրերեն Աշխատանքին սրբանվեր,  
 Իր աչքերեն կապտանույշ կիյնան մարգրիտ—կայլակներ՝  
 Ուրախության նշանակ,—ու բերկրանքեն դեռ գինով՝  
 Դուռներեն ներս կը նայի կախարդական ժպիտով:

## Մ Ի Զ Ո Ր Ե

Ի՞նչ լուսաբորբ, լուսապայծառ ժամ է այս  
Անդաստանին ու դաշտերուն լայնապերճ,  
Ցորենները հորդահեղեղ լույսին մեջ  
Հրդեհներ են ու կը վառին այեվագ:

Ու անպարույր Լըռույթին գիրկն են նըստեր  
Սար ու անակ ու ձորակները ծաղկուն.  
Մինչ Արեգակ կախվեր է վար, վեր հողուն՝  
Վոսկեգիսակ, վոսկեպսակ, վոսկեղեն:

Ինչքան անուշ կը զըրընդա գերանդին...  
Յոթը ջլուտ բազուկներ խոտ հնձելեն՝  
Յոթը մեկտեղ արև—տաղեր կը կանչեն,  
Քրտնաթաթավ՝ ծարավ սյուքի մ համբույրին:

Հորովներն հեռվե-հեռու թիւ կուգան.  
Ողն է լեցուն դաշտորդիին բրտինքով,  
Ինչպես ծովը արշալույսին՝ շողովով,  
Ու վարդաստանն՝ հիբ վարդերովն հոտևան:

Կը խոյանան բարտիներն ալ յերկնաբարձ.  
Ու կը լողան բարձրութեան մեջն աստաղուն,  
Վարը, անոնց հովանիին զովասուն՝  
Խուճբ մը հողվոր՝ արդեն ճաշի են նըստած...

Չեոքըս բռներ այեփառ հայրըս հիմա  
Կը տանի գիս ճամբաներով արփավետ՝  
Պրտակելու Հուրին, Հողին, Զուրին հետ,  
Կըտակելու հրաշք հույսերն ապագա:

— Ով լուսաբորբ, լուսապայծառ ժամը այս  
Անդաստանին ու դաշտերուն լայնապերճ,  
Ցորյաններուդ հորդահեղեղ ծովուն մեջ՝  
Հավերժ անձնու, հավերժ պայծառ թող մնաս:

## Ս Ի Ր Ե Ր Գ

Նշենին ծաղկեր ե ճամբուդ վրա,  
Մըթնալուսին հետ դուն յելիը ճամբա,  
Շըղուն, շըղըղուն յերեսներդ լվա,  
Աշուղներ լացին քու ճամբու վրա:

Մըթնալուսին հետ դուն յելիը ճամբա,  
Սըրմա ծամերըդ հովն առնի ծըփա,  
Ճախրակմանեկներ, սարեկներն ահա՝  
Շար-շար շարվեր են քու ճամբու վրա...

Հինացով կարմիր ձեռնիկներդ լըվա,  
Հուշիկ շող մ'ինկավ լճակին վրա.  
Ականջիդ վոսկի ողը կը գողա,  
Բուռ-բուռ կակաչ կա քու ճամբու վրա...

Աշուղներ լացին քու ճամբու վրա,  
Լուսնակ կաթ թափեց յեղնիկիդ ընծա,  
Ձյուն ծիծերդ այգուն կաթով թող լենա,  
Նշենին ծաղկեր ե ճամբուդ վրա:

Շաղոտ վարդենին կ'որրի, կ'երերա,  
Բլբուլներն իջեր են անոնց վրա,  
Մըթնալուսին հետ յել, յելիը ճամբա,  
Զիվան հողի մը՝ քու ճամբուդ կուլա:

## Ա Ր Տ Ի Ս Հ Ե Տ

Արտըս կ'երգե, — գիշեր ե.  
Բյուր յերանի՛ ինձ համար,  
Արտըս մեհյան ե, տաճար,  
Մամըս այնտեղ կ'աղոթե:

Արտըս կ'երգե, — կըպարե  
Ու կը խըշշա նըռան պես.  
Ան իմ հարսն ե վոսկերես,  
Իմ հարսն վոսկի հագեր ե:

Արտըս կ'երգե. կ'արշավե.  
Փըրփրուն ծովն ե հրեղեն,  
Հասկերն ամեն տըճկեր են,  
Հովն ալ՝ ծո՛վը կը կոծե:

Արտըս կ'երգե. հասեր ե.  
Կը խայտա հետ աստղերուն,  
Կը բանա գիրկն ամենուն՝  
Յերբ ալ գիշերն հասեր ե:

Արտըս կ'երգե՛, կը կանչե՛.  
— Յելեք լաճերն իմ կարիճ.  
Յելեք կարիճ առ կարիճ:  
Արտըս փըփրեր, կատղեր ե...

1001  
9966  
3966



## Ա Մ Ր Ա Ն Ի Ր Ի Կ Ո Ւ Ն

Հիր—սափորը դատարկեց հուր արեգակն իրիկվան՝  
 Լերան գլխուն ու դաշտին, գետին վրա հորդաջուր,  
 Փըրթան ձայներն հեռականչ հեռվե-հեռու, հեռալուր,  
 Ինկավ հովը ծովային՝ պարագարձիկ ու բուրյան,  
 Ծառաստանին մեջ խաղցող չար աղջնակն իրիկվան:

Արտերուն մեջ, ուր ցորենն հաղթ յեղբայրներս քա-  
 ղեցին

Գերանդիները գրկած, բազուկներով յերկաթի՝  
 Հսկա շեղջերն են կայներ արևմարին տակ վոսկի,  
 Ու դեզերը բրգածև հովապարուն նոր հարդին  
 Շուք են ձգեր անոնց վրա՝ վսրոնք ցորեն քաղեցին:

Հաղթամարմին լծկաններ՝ պառկեր հանդարտ կորոճան  
 Զերդ քաղաքներ մեծափառ՝ վոր վլեր են քովդ ահա.  
 Իրենց ունեզեն գոլ շունչը մեղմածավալ կամպանա,  
 Իրենց մարմնի քրտինքի բարկ բույրովն ալ կը լենան  
 Սարայաջ դաշտերը ամրան, վոր տակավ լույս կորոճան:

Յես կըսպասեմ՝ վոր դառնա գեղեն յեղբայրն իմ  
 պատիկ,

Բերե պարկերը լայնչի՝ ցորնին համար ասողահատ,  
 Կըսպասեմ վոր լազուրին ծագին ասողերը հատ-հատ,  
 Ճամբուս վրա լույս մաղեն աչիկներով անուշիկ,  
 Ուրիկ պիտի սայս անցնի ճըռոցներով յերգեցիկ:

... Դուռներ բանա մայրըս ծեր՝ գուրգուրանքով,  
 արևով

Մառաններուն, մարազին, ամբարներուն մըթասքող.  
 Յերգ ու պարով դեմս յեղնեն հարս աղջիկներն ըսպասող,  
 Դենն սեղան լուսնի տակ, աղբերակին մոտը գով՝  
 Մինչև հասնին յեղբայրներս, կաղնի հայրս ալ՝ արևով...:

## ԾՈՎ, ԻՄ ԾՈՎ...

Ծով, իմ ծով, իմ խաժաներ Բզնունի,  
 Դուն լույծ պաստառ ալյակներով փրփրազեղ,  
 Դուն հարածուփ սիրան իմ սրտին արյունի.  
 Խաժ ջուրերուդ բնայրը կառնեմ ահա յես,  
 Ծով, իմ ծով, կապուտագեղ Բզնունի:

Արշալույսին ինչ կարոտով կը սպասես  
 Շքեղորեն ծագող կարմիր Արևին,  
 Կը սարսռաս, կը սրսփաս հարսի պես,  
 Ու կը շիկնիս, կ'ոսկեվառիս անդազին  
 Յե՛վ վարագին ինչ կարոտով կը սպասես:

Իրիկուններն հազար թույրեր կը հագնիս,—  
 Ծիրանեփն՝ կը տարածվիս, կանհուննաս.  
 Կախարդաչվի աղջկան մը պես կը նայիս  
 Արտամետի պարտիզներուն յերկնահաս,  
 Ու գյուղերըդ՝ իբր պերճանք կը հագնիս:

Սափոր մը կաթ կ'թափե լուսնակ վոսկեսար՝  
 Պայծառ, խաղաղ զիշերվան մեջ ըզմայլուն.  
 Քեզ կը բերեն հովերն համբույր զողահար  
 Ծաղիկներեն ծործորներուդ ցողասուն,  
 Յերբ Աղթամար կոծվի լույսով վոսկեսար:

Չյունապսակ Սիփանին վոտք՝ կը հանգչի  
 Սիրակարոտ գլուխդ բեհեզ ու փրփուր:

Սարալանջը ինչպես բույլով կակաչի՝  
 Վեր՝ կը փռվի յերկնակամարն աստղակուռ.  
 Ու շուրջըդ՝ Վան յերանությամբ կը հանգչի...

Ծով, իմ ծով, կապուտագեղ Բզնունի,  
 Նավակներով ջուրերդ ահա կը ծաղկին,  
 Նավագներուդ յերգը՝ հովը կը տանի,  
 Նավակներեդ ձեռներ ջուրին կը հակին,—  
 Չայն ու ճողփյուն թե՛ճակներու ու դափի...

Ու չորս—բոլոր ծովեն ծիծաղ կը թափի,  
 — Ծով, իմ ծով, յերազագեղ Բզնունի:

## Մ Ո Ւ Ր Ա Յ Ո Ւ Յ Ի Ն

Բարակ, բարակ սրունքներովըդ կանցնինս  
Մեր կիսափուլ պատի տակեն շուքի պես,  
Վերջալույսի նշուլագեղ շողին պես՝  
Դողուն, դողդոջ սրունքներովըդ կանցնինս...

Պըստիկ աղջիկ, մուրան աղջիկ տժգունակ,  
Ցուրտ ե. աշունն հյուղերեն ներս կըսողա,  
Մինչ քու պատռած շապիկն ահա կը դողա  
Յերբ կը փչե հովն աշունի անառակ:

Մերթ կը կենաս տուներուն դեմ հոյաշեն,  
Աղապատուն հայրացքով հնց կը հայցես.  
Մերթ կը դառնաս տիկնոջ մը քով «աններես»  
Փափիկ, փոքրիկ թաթիկներըդ պարզելեն:

Մերթ կը կայնիս «քուրիկ»ներուդ քովը լուռ,  
Անոնց հագած ըզգեստները կ'երազես,  
Կուզես սիրեն, գորովագին կանչեն քեզ,  
Ժապավենով զուգեն ծամըդ սեաթույր:

Շագույրիդ մեջ չոր հաց ունիս միայն դուն,  
Զոր կը տանիս քեզ ըսպասող ծեր տատին,  
Կարժանանաս անոր գուրգուր զգվանքին,  
— Միլ-ծաղկումին, բաղձանքներուն գարնասունս—

Ու կը վազե ճերմակ կատուն աղվահեր,  
Կը փաթըթըվի տոտիկներուդ հոգնաբեկ,

Կըտկըտալեն կը հասնի քովըդ վառեկ  
Գըծագրելով գետնին վրա աստղիկներ:

Կը լուսնա շենդ՝ ծայրը թաղին աղքատիկ,  
Կը սլըլսլըլա մըրոտ ճրագը մեղմին,  
Ու կը ճըռն տխուր ճըպուռը պատին,  
Քիվին՝ մուշ-մուշ կը քնանան զեղձանիկ:

Կը քնանաս խաղաղության մեջ դուն ալ,  
Ու կը փարիս ծեր տատիկին տրամորեն,  
Հագար յերագ քեզ դառնորեն կորորեն,  
— Ինչպե՞ս կընաս անլույս ցերեկը մոռնալ:

Բարակ, բեկուն սրունքներովըդ կանցնինս՝  
Մեր կիսափուլ պատի տակեն շուքի պես,  
Վերջալույսի վոգեվարուն շողին պես՝  
Դողուն, դողդոջ սրունքներովըդ կանցնինս

— Պըստիկ աղջիկ, մուրան աղջիկ դառնակեզ...

## Ա Ղ Ե Ր Ս

— Ձյուն, վոր իջար նազերով,  
Թիթեռնիկի խաղերով  
հայրենական դաշտերուս,  
Այգիներուս արամալույս,  
Արտին, ափին վորբունի  
Ու հյուղին վոր տեր հունի՝

— Գրկէ քնքուշ թևերովդ Տղաս՝ սրբե ու քնիր,  
Իր շուրթերուն դիր բյուրակ ըստինքներդ մեղրալիր,  
— Դուն աղջիկն եմ գրգանույշ ու լուսանի ու աղվոր,  
Վորուն այսոր հանձնեցի սերեր, սերերն իմ բոլոր...

— Ձյուն, վոր իջար որորուն,  
Թերթիկներով շորորուն,  
Կապույտ, կապույտ լեռներուս,  
Աղբյուրներուս վոսկելույս,  
Ու պարտեղիս ամայի  
Վոր անձկագին կը հայի՝

— Փարե փափուկ թևերովդ, գգվե Տղաս ու քնիր,  
Իր հոգիին դիր հոգիդ, բորբ Աքևի բերկրալիր  
Կեղոնն հյուսիր, վոր խայտա, կաթը ծորիր՝ թողցրնձա,  
Վոր Գարուն տա մեզ ընծա, վոր Գարուն տա մեզ ընծա...

## ՎՈՐԲՈՒԹՅՈՒՆ

«Նայե սա խեղճ, վատուժ տղուն՝  
վոր կեցեր ե գլխահակ...»  
Մեհմուղ Եմին

Ա.

— «Տժգույն տղա՛ յեմ, տրտում տղա՛ յեմ,  
Մայրիկիս ժըպիտ շող ու շափյուղա՛  
Իր անունին պես շուրթիս կը դողա...»

— Վորբիկ տղա՛ յեմ, բոպիկ տղա՛ յեմ,  
Հոգեկից չի կա՛ վոր վըրաս դողա:

— Ալ Արև չի կա, ալ ճամբա չի կա,  
Բոլորը գացին ուրախ, միասին,  
Ինձ ընկեր մընաց տրամադոտ լուսին...  
— Ձերմ հոգի չի կա, հաշտ ուղի չի կա.  
Իրենց պես ցուրտ ե այս գիշեր լուսին:  
Բ.

Թևերըս ինկան՝ նուրբ ինչպես փետուր՝  
Հայրենի աշուն հողերուն վըրա,  
Յես անթև թռչնիկ, յես փուր ու փրփուր՝  
Այս ցուրտ ու վարար ջուրերուն վըրա:

Ու մընաց մոխիր ու մընաց նըշխար  
Կապույտ ու մշուշ լեռներուն վըրա,  
Փոշի յե անփայլ ու մոխիր աշխարհ՝  
Նըստած անարև շիրիմի վըրա...

Ծիծաղով անցան մանուկներն արտույտ,  
Մանուկներ ժպիտ, վոսկեցան գարուն,  
— Դուք բարով յերթաք թիթեռներ անփուլթ,  
Ձեզ բյուր ու բյուրեղ ծիածան սիրուն...

Թողի՛ յես յերեկ գիրկը դաշտերուն՝  
Մանկությունն իմին խեղճ ու անանուն,—  
Կիսսավեր — ստվեր, խլյակ մոլորուն,  
Հովեն հալածված հուշադոտ անոն...»

## Վ Ե Ր Յ Ի Շ Ո Ւ Մ

Դուրսը հով ե, հովապար ե...  
Ու հովն վիշապ,— լուսնոտ վիշապ,  
Դաշտերն ինկած, ծովուն վրա՝ մոլեգնորեն հա կը  
պարե...  
Յես՝ մտերիմ տնակիս հետ, տնակիս ծոց լույս ու  
ջերմին՝

Կը մտածեմ... ու կը լուսնա Յերեկն իմին,  
Ու կը ծաղկին գարնազվարճ յերկնքին տակ՝  
Ծիրանեծիր ու մանկական բյուր հիշատակ...  
Բուխերիկիս կրակին քով,— շեղջ մը վոսկի,  
Վորուն վրա մերթ կը բացվի թերթ մը դալար թավ-  
ջածաղկի՝

Կը մտածեմ աչքերս անթարթ ու անքթիթ՝  
Հայրենական հովիտներու ծաղկափթիթ,  
Ծիծառներուն, ձորակներու թուխ հոտերուն,  
Ու լաճերուն՝ սարերն ինկած կենսապարուն...  
Կը մտածեմ... Կը բացվի դեմս կածան մը նուրբ,  
Ուրկե կ'երթամ յես գլխահակ՝ գտնելու սուրբ  
Դունակ մը գոց ու բանալու գողգողազին  
Իմ ձեռներովս, ու մտնելու կախարդ այգին...  
Կը մտածեմ... Հողիներուն՝ մեռած հիմակ,  
Արծիվթևյան ու թևաբախ ու լույս համակ,  
Յերբ հեղակարծ կրակ կառնե ու բոցերուն մեջ  
հրեղեն՝

Կը ճարճատի Յերկիրը իմ՝ յեղբորեն...

... Ու կը փարիմ՝ շուքիս բարի,  
սրտի մը պես հրա-  
ջերմին,

Լալով կ'ոճեմ կրակը շառ, տնակս իմին...

Մինչ դուրսը հով, հովապար ե,

Ու հովն վիշապ,— լուսնոտ վիշապ՝

Դաշտերն ինկած, ծովուն վրա կատաղորեն դեռ կը  
պարե...  

---

## Փ Ո Ղ Ո Յ Ն Ե Ր

Փողոցներ տժգոյն, աղոտ, ցըրտահար...

Ուր ծառերը մերկ՝ կիններ են այրի,

Ու վորք լույսե ծիրանի, գոհար,

Ուր սիրան իմ բոցեղ՝ սև բոցով կայրի...

Փողոցներ հիվանդ ու շարավալի,

Փողոցներ բորոտ ու ձորձապատան,

Ուր Տառապանքը՝ լոյժ՝ կը թավալի...

Հոգիները մերկ ու պատառ-պատառ,

Կը տանին իրենց ըստվերներն անզոր...

Ու կմախակերպ եյակներ բոլոր՝

Նըկարներ ունին, յերանգներ Այսոր,

Ինձի, իրենց պես, լուռ, ուղեմուտր...  

---

## Ջ Ո Ւ Ր Ե Ր Ո Ւ Հ Ե Ց

Ջուրեր փրփուր ու փրփրադեզ ու աղաղակ,  
Հոգուս մեջեն ահա կանցնիք, արագ կանցնիք,  
Մինչդեռ կուլան ձեզ յեզերող ծեր վարդենիք...

Կանցնիք փութով, կանցնիք թափով, տրտում ջուրեր,  
Ու կը վազեմ յես հապշտապ ձեր ձայնին հետ՝  
Ունկընդրելու թե ինչ պատմեց ձեզ Անապատն ու  
արահետ...

Յես կը վազեմ ձեր վանկերու վերջին վանկին,  
Շառաչներուն, շշուկներուն, վորոնք հիմա պիտի հանգչին  
Փրփուրին պես, վոր կը ծնի ու կը մեռնի ձեր լույծ  
յանջին...

Կուզեմ գիտնալ թե ինչ ըսավ հովը թափառ,  
Հովն այսահար՝ հեռածավալ իմ մութ Յերկրին՝  
Ուր վաղը նոր, սիրաբերը նոր՝ գարունիզ հետ պիտի  
ըեկրին...

Կուզեմ գիտնալ թե կը հնչեն այնտեղ ջուրեր,  
Ու կը կանչեն մեզի կրկին շառայլացիր Արշալույսին,  
Լույսին, Լույսին, ավետավոր ու նոր Լույսին...

## Յ Ե Ղ Բ Ա Յ Ի Ս...

Համկ յեղորս

Այնքան մեծցեր ե հիմա,  
— Գեղահասակ, գեղանի—  
Վոր կը ցնցե ամեն սիրտ՝  
Յերբ ան իրենց կը նայի:—  
Կանանչ—արե՛ ե անի,  
Կանանչ—գարուն ե զվարթ:  
Արյունն իրեն՝ կը խայտան  
Ինչպես զինին աշունի,  
Ինչպես ջուրերը խըղջան  
Գյալիի հողթ լեռներուն,  
Ինչպես զոման ալ խըժժան,  
Կաթը՝ փըրփուր հոտերոն:  
Բայց յերբեմն ալ, կարծես նոր,  
Խայտուն մանուկ ե նորեն,  
Աչքերը լի կապույտով  
Յեվ արևով հրեղեն:—  
Ու նորեն-նոր, նորեն-նոր,  
Աչքերը լի կապույտով  
Յեվ արևով հրեղեն՝  
Կարծես հիմա կը դառնա  
Իր հայրենի բոց ու բիլ  
Գեղանկար դաշտերեն:

Կարծես վագեր ե այգին,  
 (Ո՛ր մեր այգին ծով-կանանչ)  
 Զուրերն ինկեր ե նորեն,  
 Ու թաց են թոն շորերն իր.  
 Կարծես ժողվեր ե նորեն  
 Խոշոր—խոշոր խընձորներ՝  
 Յե՛վ մըշկաբույր և՛ կարմիր...  
 Զամբյուղներով ծանրակիր՝  
 Տուն կը դառնա քրտնաթոր։—  
 Ու նորեն-նոր, նորեն-նոր  
 Այնպես մանուկ ե նորեն,  
 Այնքան ցնծում կը բերե,  
 Այնքան ծիծաղ լուսաթոր,  
 Այնպէս աղմուկ՝ վոր ան ե,  
 Ու հրաբեր հրդեհ ե,  
 Վոր տունը մեր մեկ վայրկյան  
 Վախնաս... պիտի հըրդեհե՛։—

Յ Ե Ղ Ե Վ Ն Ի

F.

ՅԵՐԵՎԱՆ—ԹԻՓԼԻՍ

(918—923)

Մ Ո Վ Ա Փ

Ծովանկար իմ Հոգիիս անա նավեր՝  
Ձյունաթորուն կտավներու ձյուն թևերով...  
Անա նավեր՝ տոնազվարճ ու հրավեր.  
Նավեր Տեսիլ բոցատեսիլ ու բոցերով...  
Նավեր, վորոնք պիտի բերեն բյուր հըրավեր,  
Ու կորսրված Արամանդին Կապույտ-Յերազ,  
Ու ջութակին Կարոտը բոց՝ հաս ու անհաս...

---

= 3 =

## Ա. ԻՐԻԿՈՒՆ

~~Իրիկուն — նրբաստուվեր, նրբալույս,  
 Իրիկուն — տժգունակ արշալույս,  
 Իրիկուն — դալկանույշ աղջնակ,  
 Իրիկուն — տրամադոտ Հիշատակ...~~

~~Իրիկուն — թույրերու նկանակ,  
 Իրիկուն — վարսերու նմանակ,  
 Իրիկուն — թավիշ ձայն ու լեզու,  
 Իրիկուն — անձանոթ Այցելո՛ւ...~~

~~Իրիկուն — արծաթ ձայն գանգակի,  
 Իրիկուն — կարոտերդ ջութակի,  
 Իրիկուն — սիրածամ սարսըռուն,  
 Իրիկուն — Հրեղեն Բաղցրություն...~~

## Բ. ՍՊԱՍՈՒՄ

Իրիկուն կը նստիմ յես շեմին իմ դրան՝  
 Գառնուկին ըսպասող մանկան պես,  
 Իսկ հացին յերբ զարնե չորս-բոլոր նուրբ վըրան՝  
 Կը սպասեմ, կը սպասեմ քեզի յես:

Կը սպասեմ քեզի յես շեմին վրա իմ դրան՝  
 Իր գավկին ըսպասող մորկան պես,  
 Ու աչքերս ամեն գեղ, ամեն թույր կը մոռանան,  
 Պիտի գաս, պիտ' ծաղկիս, գիտեմ յես:

Ու յերբ գաս ու լուսնաս շեմին քով իմ դրան՝  
 Իր պանդուխտն ըսպասող յեղբոր պես  
 Գըրկիս մեջ պիտ' շնչեմ կարոտով անվախձան՝  
 Բույր իմ քեզ, ըղձանքով՝ քույր իմ քեզ:

## Գ. ԺԱՄԱՆՈՒՄ

Իրիկունն եր այն պահն յերբ հասար  
 Քու Յերկրեն հեռավոր ու տօգույն.  
 Յերբ բերիբ բուրումներ դու հազար.—  
 Հիշատակ՝ հուշերու մեր հանգույն,  
 Մեր Յերկրեն մուժ, մշուշ ու տօգույն:

Իրիկունն եր կանանչ գարունի՝  
 Յերբ դրինք մենք զոհի սեղանին  
 Մեր սիրտեր,—յերկու վոստ գարունի,—  
 Վոր վառվին ու նորեն կանաչին,  
 Միշտ կարոտ կապույտին ու կանչին...: —

## Ա Ր Բ Ե Յ Ո Ւ Մ

Շուրջըս վարդեր, լուսինկա,  
 Նուրբ շափրակներ շուշանի,  
 Լուսնն պայծառ ես հիմա,  
 Անսուշ՝ ինչպես հին գինի:

Հնւր ես, հուրի վարդերես,  
 Լուս նստեր ես մնարիս  
 Ու գթառատ մորկան պես  
 Հանդարտորեն կ'որրես գիս:

Մանուկ, մանուկն եմ բուկին  
 Թեկերուն մեջ որորուն,  
 Վոսկի տերեն աշունին՝  
 Առջի ձյունեն սարսըռուն:

Համբույր ու բույր ես բերեր  
 Իմ աղնձած շուրթերուս,  
 Ծաղկածիծաղ գարուններ՝  
 Կյանքիս՝ հազիվ կիսալույս:

Ու ճըղիկն ես, աքասիան,  
 Ապրշումն ծաղկունքով  
 Գըլուխդ կախեր ես անան  
 Ու առեր ես գիս քու հով:

\* \*  
 \*

Տօգույն լույսերն հեռակա  
 Գիշերն առեր կը տանի,  
 Այնքան բնոցր ես դուն հիմա,  
 Անսուշ՝ ինչպես հին գինի...:

## Կ Ա Ր Ո Տ Ե Ր Գ

Ստ. Զորյան-ին՝ Գրչեղբայր

Ս.

Քու կարտոնն և հյուսեր ընձախտակ Տուն» քեզի,  
 Ուր կուգաս դուն նստիլ որերով միս-մինակ՝  
 Մըտածել դաշտերուն ու մարդոց ախրունակ,  
 Յորյանի ծույլ ծովուն, վոր հեռուն կը հուզի,  
 Ու խոտին, վոր լաս-լաս կը փովի, կը դիզվի.  
 Կը զրկե քեզ բույրեր ու թույրեր բեհեզի:—

Բ.

Ձեր թեյի գոլորշին կերպե մեզի հետ,  
 Կը գծե հոգիներ, կըլլա լուռ արահետ՝  
 Ուրկե մենք կը քալենք կարտով իրար հետ...  
 Ու քաղցր և դառնությունն ձեր թեյին՝ քեզի հետ,  
 Թաթավուն համեմով, բույրերով արփավետ.  
 Զայն հեշտին և ըմպել ու քալել իրար հետ...:—

(1931, Մեծ-կարտրիլիսե, Զորյանինց «Մսխտակ Տուն»)

## Ո Ր Ե Ր Ո Ւ Ն Ի Մ...

Թանկագին Հովհ. Ավագյանին

— Որեք ունիմ, որեք ունիմ,  
 Ուր դաշտերու զալարներուն իմ հոգիս՝  
 Ամեն յերազ մարգարտաշար՝ կըլլա շուշան.  
 Ամեն յերանգ՝ յերանորեն կը կանչե զիս  
 Արևծագի հրաշք՝ ժամու իբրը նըշան,  
 Ու ամեն ձայն, ամեն ցընծում՝ կըլլա շուշան:—

— Որեք ունիմ, որեք ունիմ,  
 Բախտի բյուրեղ բոցերով լույս, ծիրանելոյս,  
 Ուր կը խայտա, կը փըրփըրի նժույզն իմին,  
 Ուր կը պայթի լեռնեն ի վար շուռ Արշալույս  
 Մըրտին նման ու սիրո պես սիրաջերմին,  
 Ուր նորեն լույս ու բերկրալույս և Արշալույս:—

— Որեք ունիմ, որեք ունիմ,  
 Մեհյաններով մարմարակերտ, լայն ու լուսեղ,  
 Յերբ կը ժպտի ավազհատիկն իսկ ծովափին,  
 Յերբ հաներ են սիրտն իր խայթող վերջին ասեղ,  
 Ու Յեսը իմ՝ կըլլա շառաչ շուրի ծափին,  
 Ու կը պառկի կապույտ ծովու ծոյլ ծովափին:—

— Որեք ունիմ, որեք ունիմ,  
 Յերբ միջորեն պըղնձակուռ՝ կը ծավալի,  
 Ուր կը կոծեն զիս ըՄտվերներն ու Անապատ,  
 Յերբ կը վախնամ շուքես սատան ու ահալի,  
 Ու կը փըրթի դաժանորեն Դեղին-Թաթառ,  
 Ու հըրախանձ՝ ինձ կը մնա բարկ Անապատ:—

— Որե՛ր ունիմ, որե՛ր ունիմ,  
 Գորշ ու գունատ, մեռած մանուկ յեղերորեն,  
 Ուր թևաթափ կանցնի թռչունն ալ մոխիրե  
 Ու կապարե մըշուշներուն մեջն նորեն  
 Կտուցն իրեն իմ վերքերո՛ւս ան կը խըրե...  
 — Ափսո՛ս, ափսո՛ս, կանանչ չիկն, ալ մոխիր ե:—

## Հ Ի Ա Ս Թ Ա Փ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քու մանուշակ-տխրություն  
 Զորս-բոլորըս կը նըստի  
 Ու կը պարզե ձեռներն իր՝  
 Կըրակներուն իր սըրտի,  
 Ու կը խոսի ձայնը իր՝  
 Զայնին նման կապույտի:—

— Աշխարհը ցուրտ ե տըղաս,  
 Աշխարհը՝ ձյուն Մասիսի,  
 Տերևաթափ ե տղաս,  
 Մեխակ չի կն հունիսի:

Արդեն դիպան թևերուս  
 Զևերն՝ յեղած ժայռեղեն,  
 Ի՛նչ գունաթափ վերջալույս,  
 Աստղերը ցուրտ կը մաղեն:

Ու կը բանա գիշերն ալ  
 Իր ձորձեղեն վերարկուն,  
 Ինչպե՛ս կըրնամ չի դառնալ  
 Զայն ու սըրտի կըրակուն:

Աշխարհը ցուրտ ե տըղաս,  
 Աշխարհը՝ ձյուն Մասիսի,  
 Աշխարհը սուտ ե տղաս,  
 Վարդեր չի կան մայիսի...»:—

## ԳԵՂԻՆ ԴՂՅԱԿԻՆ ԱՂՋԻԿԸ

— «Les autres jours sont déjà las...»  
Maurice Maeterlinck

## Ա.—Վ.Ա.Խ

Լուսաղջիկին և Անի իմ Դեղին Դղյակին՝  
Վոր նըստեր և անհ հոգույս հետ կը խաղան,  
Մանուկին պես անմեղ իջեր քով կը ըրակին՝  
Անըզգույշ, անվարան՝ կը նայի... կը խաղան,  
Անգիտակ՝ թե գուցե գարուններ բըռնկին...

Գարուններ բըռնկին ու Դեղին Դղյակին  
Ցանեն հուր ու հանդես, խարույկներ բոցազես,  
Ուր ջուրեր դառնան յերգ ու համերգ մոլեղին,  
Տանին ձայնն անձանոթ՝ զիշերվան կանչին պես՝  
Տարրերուն, սիրտերուն, ամենուն, ամենքին...

## Բ.—ՅՆԾՈՒՆ ԱՅԳ

— Յեկիր աղջիկըս, յեկիր...  
Անմեղութունը կ'անցնի առտըվան մեջ ըսպիտակ,  
Անմեղութուն կը ծաղկի քարերու ծոց, ժայռին տակ,  
Անմեղութունը կ'երգե մեղեդիներն իր հըստակ,  
Անմեղութուն կը խնդան այակներու պես խայտակ,  
Անմեղութուն՝ աղբյուրին շուրջն և իջեր ըսպիտակ...

— Յեկիր աղջիկըս, յեկիր...  
Ձութակ—մատներն այգային ու ձայնը քու կիթառին՝  
Բացին ամեն պատուհան, փեղկերը փակ՝ գիշերվան,  
Գինով տարրերն աչքի պես քու աչքերուն կը հառին,  
Քու Դղյակը կը խընկեն վայրի բույրերն անտառին,

Ինչ լույս և դուրս, Արշալույս լուսասպիտակ առտըվան,  
Տոնը գարնան գեղանույշ ու կիրակի հոտանն:

## Գ.—ՅԵՐՋԱՆԻԿ ՄԻՋՈՐՆ

Դաշտին մեջ անանուն, դաշտերուն մեջն անհուն՝  
Դուն մորենի վառուն, գուն մորենի անմար,  
Դուն գյուլթանք ու բարկ—բույր հովերուն հեռավոր.—  
— Իմ աղջիկ լուսանի դեղնագեղ Դղյակին,  
Իմ փըրփուր նունուֆար, իմ հոգիս՝  
Վոր սրտիս լըճակին կը հակիս:—

Մանուկներ կան հեռուն քեզ նայող, հիացող,  
Մանուկներ, վոր լույսեղ լույսի պես կը դողան,  
Քու լույսեղ հիացիկ՝ մաս մը լույս կը բաղձան.—  
— Իմ աղջիկ բոցահեր՝ դեղնալույս Դղյակին,  
Իմ արփին, լուսարփին, իմ հոգիս՝  
Վոր արև ու ակունք կը հագնիս:—

## Դ.—Հ Ր Գ Ն Հ

Իմ արյունիս մեջ արյունի դեղին բիծեր ևս ցաներ,  
Իմ շուրթերուս գինեբաղձ՝ գիծեր քաշեր ևս բոսոր,  
Աչքիս մոտիկ՝ բայց հեռուն՝ հըպարտորեն ալ կայներ՝  
Դուն աճեր ևս, նըվաճեր, դարձեր Վոգի տիրազոր,  
Լուսակերտեր ևս ինձի ցնորագեղ գիշերներ,  
Միջորեններ հըրանձրե, ծիրանդակի աշուններ...

## Ե.—ԳԻՆՈՎ, ԳՈՇԵՐ

Կապույտին տակ գինի, կապույտին տակ խընդուն՝  
Քու ժըպիտ ժամերով զըվարթուն՝  
Ձիս առեր կը տանիս նոր—սիրով թաթաղուն,  
— Դուն հընչք հրավարս, դուն հոգի, իմ հոգիս,  
Դուն աղջիկ բոցագեղ իմ Դեղին Դղյակին...

Ի՞նչ պայծառ ծիրերով ամեն դի կը վառի,  
 Ի՞նչ կարմիր կարոտով կը վարի, վարարի  
 Քու ճամբան, իմ ճանրան անհունի.—

— Դուն Անհունն արևջեր, դուն անունն, իմ հոգիս,  
 Դուն աղջիկ բոցանույշ՝ իմ Դեղին Դղյակիս...

Ձ. — Ա. Չ Ք Ե Ր

Աչքերդ հիմակ յերանդ են, աչքերդ համակ յերազ են.  
 Խոսք են խոսուն՝ շուրթերուս,  
 Յերկու մանուկ դեռ անուս՝

Վորոնք շուշան յերազով քու աչքերը կ'երազեն,  
 Վորոնք որ են, որոր են ու բոցանույշ յերանդ են...

Անոնք լույսի յեն կարոտ՝ բայց լուսինեն կը մըրսին,  
 Անոնք արբեր են, հարբեր,

Քափառներ են բիլ ափեր,

Անձրևին տակ աստղերուն՝ տեսեր են մեզ միասին,

Վոր ջերմ այգեր կը բաղձան ու լուսինեն կը մըրսին...

Դարձուր ինձի ու թարթե, դարձուր հոգիս ու թարթե,

Անոնց շըշունջ կը բավե,

Վոր իմ հոգիս ալ նավե

Ծովին վըրա ծիածան, Միջոցին՝ վոր հանդարտ ե,

Միջոցին՝ վոր ձայն ունի, խաղեր ունի, կը թարթե...

Ե. — Կ Ս Կ Ի Ծ

Անձրևին պէս ես լացեր, անձրևի ձայն ես դարձեր,  
 Յերբ խըլելու են յեկեր քու պուպրիկներն ու գանձեր.

— Աղջիկն իմին խուսափուն, տեսիլ դողուն ու անտես,

Աղջիկն իմին գըրգանույշ՝ վոսկեհայաց Դղյակիս,

Ունընին հեշտարույր, ծաղկարույրան իմ հոգիս:—

Կսկիծ բերեր են բեզի, վոր քու հոգի՞ն ալ հուզի,  
 Մոռնա հոտերն ըսպիտակ, հեռուները բեհեզի՞.

— Աղջիկն իմին վիրավոր, խըռով յեղնիկն իմ անտես,  
 Աղջիկն իմին ցայգանույշ՝ ցայգաշաղուն Դղյակիս,  
 Յեվ Արևի հիւր արյունն, արենավառ իմ հոգիս...

Ը. — Ա.ՍՊԵՏՍԱԿԱՆ

. . . Դաշույնըդ տունը շուրթերուս,  
 Պատռե նըկարն իմ բեհեզ,  
 Քեզմե ալ չեմ վախնար յես...

Խմիր թույրը վարդերուս,  
 Այրե Տեսիլն իմ բեհեզ,  
 Քեզմե ալ չեմ վախնար յես...

Ճերմակ ցանե վարսերուս,  
 Ճըմլե հոգին իմ բեհեզ,  
 Քեզմե ալ չեմ վախնար յես...:—

## Հ Ա Վ Ե Ր Ժ Վ Ա Յ Ր Կ Յ Ա Ն

Զիս հանձնեցիր դուն կրկին անտառներու հաճույքին,  
Յեղնիկներու խընճույքին, գիշերներուն գըրգագին,  
Ու վայրկյանին լույս ու լուռ՝ վայրկյաններուն թանկագին։—

Մեխակով լի յեն ժամեր ու լույսերն ալ ձյունեղեն,  
Շուշան ձեռներն ամեն դի՛ ձայն ու ձևեր կը մաղեն.  
Հողը համբույր ե համակ, հոգիս ծաղկեր ե հողեն։—

Սուշեր կուգան սիրազեղ կարոտանուշ սրինգին,  
Հոտը յերազ ե ճերմակ՝ աստղերուն տակ կաթոգին,  
Հովիվն անուրջ հիշատակ՝ անըջազեղ այս կյանքին։—

... Շիթ մը անձրև՝... Միթե մենք լացինք այսպես հեղակարծ  
Ինչպես յեղնիկ արարած՝ ցայգուն հանկուրծ զարնըված,  
Ինչպես գինով թափառիկ՝ վըհուկներե կախարդված։

Զիս հանձնեցիր դուն կրկին անտառներու հրճվանքին,  
Յեղնիկներու խընճույքին, գըրգանքներուն գըրգագին,  
Ու քու Հավերժ վայրկյանի՛ հավերժանուշ նըրվագին...—

## Հ Ի Ա Ժ Ա Մ

Ուրիշ էյիբ, ուրիշ էյիբ, ուրիշ էյիբ,—  
Զըվարթ գիշեր, զըվարթ ճամբա, զըվարթ հոգի.  
Լազուրին ծոց բըռնկած բոց Արեգակի,  
Զըվարթ աղբյուր, վոր ինձ զվարթ ջուրեր բերիր,—  
Ուրիշ էյիբ, ուրիշ էյիբ, ուրիշ էյիբ։—

Ուրիշ գիշեր, ուրիշ ճամբա, ուրիշ աղբյուր,  
Տարաշխարհի թև թռչունի, ըսպիտակ բոլոր,  
Իմ մանկությունն վոսկեպայծառ ու մըշակարույր,  
Աքասիայի սիրտը ծաղիկ՝ ծաղիկով բյուր,  
Ուրիշ գիշեր, ուրիշ ճամբա, ուրիշ աղբյուր։—

Իմ մանկությունն, ցայգազվարճ իմ հիացում,  
Հեռականչ յերգ՝ կապույտ, կապույտ իմ ծովակին,  
Իմ ծովակի Արևածին, ծովաչլի կին,—  
Միակ իմաստ, միակ հոգի, միակ հարցում,  
Իմ մանկությունն, ցայգազվարճ իմ հիացում...—

... Հոգիս կուլած այդ ժամեն վերջ արյունսլվա,  
Հոգիս—ծաղկած վոսկեմանուկ գեղեցկորեն,  
Հոգիս կուզե վոր քու նրբին ձեռներ բերեն,  
Հոգիս կըղձա քու ջերմագին գիրկը մնա  
Ու լա ժամը՝ իր ժամերուն արյունսլվա...։—

ՋՈՒՐԵՐՆ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Հորդ են ջուրերն այս գիշեր. խենթ են ջուրերն այս գիշեր...  
Անոնք դարեր են անցեր բայց դարերը չեն հիշեր,  
✓ Անոնք մոռնլ աղաղակ՝ գիշերներն յեն իջեր.  
Վարմերուն տակ տընակիս՝ կալեկոծի՛ն այս գիշեր...

Պաղատանքին նըմանակ, վերհուշներով սիրաջեր...  
Կուզան ջուրերն այս գիշեր, կանցնի՛ն ջուրերն այս գիշեր.  
Ու կը լեցնեն տընակն իմ՝ զըմուռաներու պես հուշեր,  
Անքավելի Խըռովանք ու դաշույնի պես գիշեր...

Հորդ են ջուրերն այս գիշեր. խենթ են ջուրերն այս գիշեր,  
Անոնք դարեր են յերգեր՝ բայց դարերը չեն հիշեր,  
✓ Անոնք անհուն աղաղակ, անոնք Բարձունք ու Եջեր՝  
Հիմա հեղեղ հիշատակ՝ տընակիս վոտըը իջեր՝

Զիս կը կանչեն այս գիշեր, կուլան վրաս սիրաջեր...  
—Հորդ են ջուրերն այս գիշեր. խենթ են ջուրերը այս գիշեր...

Ս Ո Ւ Գ

(Մայրիկիս խոսքեր)

Վարդանուշ քրոջս հիշատակին

Թաղեցին՝ դարձան  
Մատիկներ մարմար, վարտերը դեղձան.  
Թաղեցին՝ դարձան:

Թաղեցին՝ դարձան  
Աչերը աղվոր, կապույտին ընծան.  
Թաղեցին՝ դարձան:

Թաղեցին՝ դարձան.  
Մընաց անըստվեր Տնակիս կածան.  
Թաղեցին՝ դարձան:

—Հոյ իմ,  
Ձեռներն իմ՝ Ձանի կը բաղձան...

## Կ Ա Ն Զ

Մանուկներու յեվ մեծերու համար

Ըսպիտակ են ծաղիկներն այս առտուն,  
Յեվ անմեղ և անուշ և Արե՛ւ ըսպասող.  
Իմ մանուկ որբերու կարոտով լուսողով՝  
Ըսպիտակ են, գարուն  
Ծաղիկներն ու ճամբան՝  
Այս առտուն...

Պիտի լամ

Ծաղիկներն ըսպիտակ իմ գարուն որբերու...

— Բայց ինչո՞ւ, բայց ինչո՞ւ,

— Ծովերու պես կապույտ իմ Հոգիս,

Իմ Տըղաս, վոր ծովիս կը հակիս,

... Ե՛ր, անցնով...

Ռունգերն իմ

Այս առտունն իսկ գարուն գեղեցիկ,

Այս ժամի ժամերուն հիացիկ՝

Մեխակի բարկ բույրերը կուզեն,

Յեվ գինի կը բաղձան Արևի կրակով,

Յեվ Ուժին հարուժյուն,

Յեվ Փառքին բըռնկում...

(Ու միթե՞

Ուռիի շուքերուն, այսքան ուշ,

Ձեր շուքին մետաքսը հոտոտել հնարկ ե ար,

Ու միթե՞

Ձուրերուն վրա լույս ու անուշ՝

Ձեր աչքերն մանուշակ՝ վորոնել հնարկ ե ար...)

...Ձեզ համար ե նորեն այս Տըղան տրտմակիր,  
Այս Տըղան տարագիր,  
Ձեր հոգին ե նորեն,  
Ձեզի հետ,

Արյունն իր՝ ձեր արյունն ե գարուն,  
Բայց յերգերն իր՝ աշխուժ, ծովերու պես կապույտ,  
Ծովերու պես մըրրիկ ծըփանուտ՝  
Կը կանչեն ձեզ Գարուն  
Արյունով, աստղերով, վոսկիով վարարուն...:

## Յ Ե Ր Գ՝ Ա Ր Ծ Ա Լ ՈՒ Յ Ս Ի

## Ա.

Արշալույսը լույս՝ փայլ ե ու բոսոր.  
 Արշալույսն անա հրդեհն ե հեղեղ,—  
 Յուրեր ցուցըլուն, վոսկի հորդագեղ,  
 Մութի, ըստվերի խուճապ մահազոր.  
 Զարթոնք զըվարթուն դաշտերուն վրա,  
 Ուր հուրն Ահուենին՝ լնւյծ՝ կը հուրհուրաւ...

## Բ.

Կը մըխան անտառ բոցերով կանանչ,  
 Ծառս կելլե, կուռի ու կանծայրանան...  
 Կը հոսի անտառ ծիծաղով կանանչ՝  
 Հողուն թևաբաց, լեռներուն վրան...  
 Կը ծըխան անտառ բույրերով կանանչ,  
 Բույրով հոտեան ուրց ու զըմուռաի,  
 Հովին թև կառնե ու կալեհոսի...

## Գ.

Կանչ ե, կարկանչ ե, կանանչ ե առտուն.  
 Ու զիլ, զըրընգուն զանգանկ ե առտուն,  
 Բանխտ ե, զրանխտ ե, զըմրճելտ ե առտուն,  
 Ու վան, բոցավառ զինի՛ յե առտուն:

## Դ.

Զըրճւյց ե զըվարթ գերանդին այգուն,  
 Յերգ ե յերազուն գերանդին այգուն,  
 Սույլ ե սրտագին գերանդին այգուն,  
 Փայլակ ե փաղփուն գերանդին այգուն,  
 Ծիածան յերանգ՝ մարմանդին այգուն...:—

## Ե.

Զորն ի վար ծաղկուն, ձորն ի վեր ցընծուն՝  
 Մանկիկներ են յոթ՝ ծիծաղ ու ծաղիկ շուրթերուն կեռաս.  
 Հովի պես խոսուն, հովի պես հոսուն կերթան վաղիվաղ,  
 Մանուկներ են յոթ, դափ ու դալարի թավշին վրա գիրգ՝  
 Կը ծափեն ուրախ... Իսկ յերբ նվազին՝ կիյնան իրար զիբկ  
 Զորն ի վեր ցընծուն, ձորն ի վար ծաղկուն:

## Զ.

— Հողիներ դողուն, շողացեք ինձի,  
 — Ծաղիկներ մանուկ, ժըպտացեք ինձի,  
 — Յեղեգներ դողուն, դո՛ղ տըվեք ինձի,  
 — Արտուտներ ճըչան, ճի՛չ բերեք ինձի,  
 — Պիտի մեծնա Ան,— Մանուկս աղարծի:—

## Է.

Տունն իմ ըսպիտակ՝ թող լըքոն մընա,  
 Թող մենակ մընա, թող մընա ամս,  
 Իմ տունն արփաթև առտունն ե հիմա.  
 Իմ տունն՝ Արևի հըրախանգն անմա:—

Վոսկի համբոյրով յես ճամբա ինկա,  
 Հողի, հողվորի ինչ բյուր բերկրանք կա,  
 Ինչքան մանուկներ վառ ու տալագան...  
 — Յեվ ինչ բերկրություն Հողեն պիտի գա...:—

## Թ.

Բյուրեղ ու պայծառ Զայն իմ առավոտ,  
 Լալ ու լալաղար Թույր իմ առավոտ,  
 Զահ ու ջահավառ Լույս իմ առավոտ,  
 Փուր ու փըրփուրի Ալիք առավոտ,  
 Հողիս պայթեցանվ քու Կրակին մտ...:—

## Պ Ա Յ Ծ Ա Ռ Ս Ե Ր

(Հանկարծ, հանկարծ  
Սառած լույսի լույս պաստառին վրանն ինկար,  
Յեղար Տեսիլ տարաշխարհի, բոցազխտակ զարմանկար,  
Ու անմարմին իմ հոգիես՝ մարմին հազար)

Կը սիրեմ քեզ Արշալուսիս փառքերուն պես,  
— Արշալույսն իմ ու փնոքն իմին,  
Իրիկունի արյունին պես, Արևին պես՝  
Կը սիրեմ քեզ...

Կը սիրեմ քեզ ծովակին խաժ ջուրերուն պես,  
Ծովակն իմին, խաժակն իմին,  
Որորի պես, որերուս պես՝  
Կը սիրեմ քեզ...

Կը սիրեմ քեզ թավաղալար դաշտերուն պես,  
— Թավիչն իմին ու դաշտն իմին,  
Միջուրի կարոտին պես, կըրակին պես՝  
Կը սիրեմ քեզ...

Կը սիրեմ քեզ վոսկեվարար աշունին պես,  
— Վոսէիդ իմին, աշունն իմին,  
Խարույկին պես ցայգերուն վես՝  
Կը սիրեմ քեզ...

## Ա Ն Տ Ա Ռ Ե Ր Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### Ա. Նախերգ

— Անտան իմ,  
Տուն իմ, բու միսթիք դուռներնուդ եմ մոտ.  
Միսթիք ուխտավոր յես այս առավոտ,  
Ու հրածարավ իմ հոգին կարոտ՝  
Սեմիդ կը բանամ յես այս առավոտ:

Խըմելնու կուգամ բու Յերազը դով,  
Քու հորդ դալարի դալարիքը ծով,  
Լըսելնու կուգամ հազարան նազով  
Չայնիդ նըվագուն խոովանքը ծով...

Ձիս ընծայելնու կուգամ քեզի յես՝  
Քու խարտիչագեղ յեղնիկներնու պես,  
Բավիղներուդ մեջ կորսըվիլ անտես՝  
Խորհուրդին նըման, հայացքի մը պես ..

### Բ. Հիացի

Յայգուն խորն յերգված յերգին նըմանակ՝  
Խորհուրդ ե խորին Անտառը հիմակ,  
Բնույր ե ըստաշխի բիլ կամարին տակ,  
Հով ե, հովապար, տըխուր թավջութակ,  
Վարար վարսերու պարը լուսարագ,  
Բանաստեղծ տըղու յերանգապնակ...

### Գ. Հայցնուրյուն

Սոճիներն են Անտառին, սոճիներն իմ Անտառիս,  
Սոճիներն են. վոր կերգեն Անտառին մեջ հոգիիս.—

«Անս սափոր առ սափոր բ՛ռւյր ենք բերեր մենք քեզի,  
 Բույր ենք բերեր քաղցրաբույր արևագեղ Շիրազի,  
 Անեանքին մեջ ծաղկող Արբեցումը յերազի:

Յեկ խորհուրդին զըմբուխան, գնդանիքներուն ալ սուտակ՝  
 Ունինք թաքուն թալիսման, լուսաղբյուրները հըրաշք,  
 Ընծաներու գանձարան, բյուրեղանուն հիշատակ:

Ու հեքիաթին պես հազար ունինք սրահ ու սյուններ,  
 Ուր մըշուշին մեջն անուշ՝ Վոսկիմանուկն և քըններ  
 Ու իր Վոսկին՝ հրագեղ Ասպանիլին և սլահեր...»

Սոճիներն են Անտառին, սոճիներն իմ Անտառիս,  
 Սոճիներն են, վոր կերգեն Անտառին մեջ հոգիլիս:—

#### Դ. Վայրկյաններ

Իմ շուրթերուս յես՝  
 Սըրընգահար հովվի պես,  
 —Անտան իմ,  
 Սըրինգ ունիմ սիրերգակ,  
 Սըրինգ ունիմ բյուրերգակ,  
 —Անտան իմ...

Զորակներեդ շողպեղ՝  
 Կը բարձրանա հոտն իմ՝ փըրփուր ամպի պես,  
 Կը բարձրանա լանջերդ ի վեր գեղատես  
 Ամեն առտուն՝  
 Արևոճն:  
 Յեկ որորով յերբ կանցնի ան  
 Արբած, հարբած սըրինգես  
 Ու ջուրերեդ լուսագես՝  
 Կը ծավալի գեղ ու գեղգեղ չորս-բուր,  
 Յեղենիի, սոճիներու խըռովանք  
 Ու կանանչի հեշտանըվաղ ըզմայլանք...

Միջորեյին՝  
 Կը հանգչի ան շուքերուն  
 Գու հովածիգ ծառերուն,  
 Միջորեյին  
 Յես կը նստիմ իրենց շուքին առնթեր՝  
 Հոտոտելու շիրագավառ իմ վարդեր,  
 Խըմելու քոց ու գինի՝  
 Նըման վոսկիլ արյունի:  
 Միջորեյին  
 Յերբ կը նայիմ Արևու հրադաշտի անհուններն՝  
 Իմ բաց աչքերս հոն կը գանեն առյուծներ՝  
 Հրագիսակ, հրահեր,  
 Վորոնք իրենց կանակներուն կը տանին  
 Աղջիկներու մերկ մարմին,  
 Վորոնք խըմեր են գաղանթեն  
 Թույները սև սափորներեն  
 Յեկ Արևու ակերեն...

Իսկ Իրիկուն՝  
 Յես կը դառնամ իմաստուն,  
 Ու ըսպասուն ու արթուն...  
 Կառաջանա հարդարտորեն հոտը իմ,  
 — Անտան իմ,  
 Կառաջանա՝  
 Կը բեկբեկի շողերեն.  
 Կը սարսըռա ծիրանոսկով թաթաղուն  
 Ու սըրինգեն իր տըղոճն:  
 Ու կարածի ան խաղաղ,  
 Մինչև իջնե մըթնշաղ,  
 Մինչև աստղեր լուսաշող...

\* \* \*

Բայց, յերբ սըրինգն իմ բյուրերգակ,  
 Բայց, յերբ սըրինգ իմ սիրերգակ

Կասի ընդոստ՝  
Ան հայացքովն իր լըսին  
Կը նայի զեպի տուն  
Ու աչքերուն իմաստուն,

— Անտան իմ,  
Հայացք իմին՝ մըտերիմ... —

### Ե. Թափանցում

Սոճիներեն՝ կարծես թե ան  
Ծըխեց հոգին իր հոտեան.  
Ու լուսնային, քիչ մը աղոտ՝  
Ան եր կարծես զեռ անաղոտ:

Ծըխեց հոգին իր հոտեան՝  
Իր համբույրին պես իրիկվան,  
Չյունեց վրաս կըսկիծը ցուրտ,  
Կըսկիծը լայն, կըսկիծը լուրթ:

Ու լուսնային, քիչ մը աղոտ՝  
Վառեց վերջին վոսկի ծղոտ.  
Ու մնացի այս հովիտին  
Փոթորիկին՝ վայրավատին:

Ան եր կարծես զեռ անաղոտ,  
Ինձմե հեռու՝ բայց ինձի մոտ,  
Ծըխեց հոգին իր հոտեան,  
— Ծաղիկն անուշ՝ սիրերգության: —

### Զ. Յայգատն

— Ձեռներդ ինձի՝ տանիմ, տուր տանիմ  
Լուսինով ոճուն արծաթ Անտան իմ,  
Քեզ նյութ ու աննյութ սեր իմ մըտերիմ,  
Ձեռներդ ինձի՝ տանիմ, տուր տանիմ...

Տոն ե, ցայգատոն թավիշ Անտանին.  
Հովերն են թիթեռ, դողը կիթառին,  
Վոր թեթե թեով կերթան՝ կը թառին...  
Տոն ե, ցայգատոն թավիշ Անտանին:

Տանիմ քեզ, վոր Անտանիս պես ծաղկիս՝  
Բազուկներու մեջ իմ ջերմին գըզվանքիս,  
Շընչեմ քեզ աճյունն ինչպես աընակիս.  
Տանիմ քեզ՝ վոր Անտանիս պես ծաղկիս:

Յեղենիին ըսեմ քեզ կը սիրեմ  
Իրենց արտում վսեմության մեջ վըսեմ,  
Ու արեես մաս մը քեզի ընծայեմ,  
Յեղենիին ըսեմ քեզ կը սիրեմ... —

### Ը. Վերջալույս

Կը խնկե Անտառ կնգրուկ քաղցրություն  
Իմ թոշ ու դալուկ ցընորքիս գարնան.  
Անտառն՝ յերազի յերանգ մոգություն  
Կը ցանե բոցեղ յերազիս վըրան...

Կը թերթե Անտառ թերթերը դողուն  
Մատենիս՝ արգեն խոկերով ոճուն,  
Անտառ կը կարգա սիրտը իր տըզուն՝  
Հովի ծնծղանուշ խաղերով ցընծուն: —

«... Մեռավ ու մնաց ծիրանի մոխիր  
Ծիրանի այգու բոցեն շառագույն.  
Գընաց ու թողուց ծիածանի ծիր՝  
Իր հաշտ, հարազատ աչքերու հանգույն.  
Մեռավ ու մնաց ծիրանի մոխիր:

Աշուն ե. նախշուն հոտ ու արահետ,  
Հրաշքի նըման անցեր ե գարուն,  
Սըրբնդ եր, սոյլ եր Սերը արփավետ,  
Համբույրն հաշիշի բույրը որորուն,  
Աշուն ե. նախշուն հոտ ու արահետ...»

(Մոռանալու համար կը թողում նորեն  
Մեհյանիս պայծառ սեղանները մոլթ,  
Ու դառնակսկիծ, տրտում, տարորեն՝  
Կը փակեմ արթուն լուսամուտը լուրթ՝

Հըսկող, հիասքանչ Կապույտին վըրա,  
Ծովուն ծըփագեղ, դալարին մարմանդ,  
Ու կըրակին շառ վոր կը հուրհուրան,  
Աստղերուն՝ ընդմիշտ ցոլուն ազամանդ...

Ու կերթամ այսպես հանդչելու համար  
Համող գիշերվան գերկը հեշտալիր,  
Տեսնելու ուրիշ Բոցեր ու Մարմար,  
Այգուն՝ բանալու սիրտըս՝ լուսալիբ...)

Թ. Տեսիլներ

Կը վառեմ հոգիս՝  
Վոր տանի գիս  
Ավազաններուդ պայծառ ջուրերուն,  
Քու լըճակներու լույծ աշխարհներուն,  
Ու յերբ գլխահակ  
Նայիմ իրենց խորն անդընդախոր՝  
Տեսնեմ անտառներ հավերժ գարունով,  
Տեսնեմ արևներ իր ճաճանչավոր,  
Ճակատներ հպարտ, ճակատներ անպարտ,  
Վողկույզ առ վողկույզ վառ աստղերու պնր...:

Ժ. Տրսուրյուն

Այսոր ունիս դուն, Անտան իմ անհատ,  
Վարսերուդ ծագկած վոսկիներ հատ--հատ,  
Այսոր հովերու թախծանուշ ջութակ,  
Այսոր արցունքի աշնային վըտակ:

Այսոր հովերու թախծանուշ ջութակ,  
Կըսկիծով առ լի կըսկիծի դյութանք.  
Իսկ յես դառնորեն կայնած սրտիդ դեմ՝  
Անհուն, անանուն խաղերդ կը զիտեմ:

Սաղերդ կը զիտեմ անանուն, անհուն,  
Արյունով թաթավ արևմար պահուն,  
Ու կուլնամ քեզի Սեր իմ արփավոր,  
Կյանք եմ, Կրակ եմ, Լնչս իմ ուխտավոր:—

ԺԱ. Բաղձանք

— Անտան իմ, թան իմ, վոսկի կիթան իմ,  
Ու ալար—դալար տանդ իմ անթառամ,  
Թնչը իմ, համբույր իմ, կանանչ-արև՝ իմ,  
Արևես հետո թող քեզ միանամ...:

— Անտան իմ, թան իմ, վոսկի կիթան իմ:—

922, Ծագվերի—(Վրաստան)  
Սմառ

## Մ Ի Ս Ա Բ Մ Ե Ծ Ա Ր Ե Ն Ց - Ի Ն Հ Ե Տ

(— Դուն ես, Իգլին.  
— Տնակս ցուրտ եր  
Իսկ Անտառը՝ ձյուն:—)

Ձմրան գիշեր:— Դուրսը շուշան ես մաղեր.  
Սենեկիս մեջ մըշուշային, մեղմալուս՝  
Դուն կը կարգաս ծիրանեծիր «Մոր տաղեր»  
Ու կը բանաս փակ դռնակներն իմ հոգույս:  
Շառ կրակը մշուշին ծոց կարյունի  
Ու կը հսկե աչքին նման լըռանթարթ,  
Ու կը հոսի ձայնը ծորուն, թավշենի  
Քու շուրթերու աղբյուրեն քաղցր ու հանդարտ:  
«Ծիածանի» եջերն ըզգոյշ կը շըջես  
Քու սատափե ու մոմեղեն մատներով.  
«Շերամատուն...», «Իրիկնամուտ» վոսկեգես,  
Ու «Հեղեղատ» ու «Մըթնշաղն» ալ գինով...  
Ու խոովուն՝ կը քալենք մենք շարունակ,  
Կը զգանք համբույրն հով ու ծովին հեշտագին,  
Կը նըստինք պահմ աքսախայի շուքին տակ—  
Ու կենսաբաղձ՝ կիյնանք գիրկը «Արեխ»...

Ծունկի իջած յերկյուղով բովը կրակին՝  
Պուտ մը արցունք կը ծխեմ յես գողունի  
Հիշատակին իմ լուսագեղ Միսաքին,  
Ու պատկերին՝ Տեսիլիս մեկ գեղանի...

...Ձմրան գիշեր:— Դուրսը շուշան ես մաղեր,  
Սենեկիս մեջ մըշուշային, մեղմալուս՝  
Դեռ կը կարգաս ծիրանոսկի իր տաղեր  
Ու կարյունես կապոյտ շուրթերն իմ հոգույս...

## Ս Ո Ւ Գ

Բանաստեղծ Վահան Տերյանի Հիշատակին

Կը կոծե խուցս անձրևը ցուրտ ու տրտմական.  
Ծաղկուն ծառերն իմ պարտեզիս՝ լ՛սւո՛ կը խոկան.  
Ու կը վրթի հոգուս խորեն ձայն մը գուժկան.  
— «Անի չի կա. Անի մեռավ. տարի՛ն արդեն...»  
Ծաղկուն ծառերն իմ պարտեզիս՝ լ՛սւո՛ կը խոկան:

— «Անի չի կա. Անի մեռավ. տարի՛ն արդեն...»  
— Իմ խեղճ տղա, քնքուշ տղա, շուշան տղա,  
Թող քեզ հըսկեմ յես այս գիշեր մինչ լուսադեմ.  
Ու լույսն աղոտ՝ պատկերիդ դեմ լա ու դողմ...  
— Իմ խեղճ տղա, քնքուշ տղա, շուշան տղա:

Թող լույսն աղոտ պատկերիդ դեմ լա ու դողմ...  
Ու լույսին տակ՝ կարգամ տրտում գիրքը անուշ քու քերթողի,  
— Հրե տղա, հրաշք տղա, հոգի տղա,  
Վոր սիրտը քու այնպես խրոտով՝ ալ խաղաղի...  
— Ո՛, լույսին տակ մեղմիվ կարգամ գիրքը տրտում քու քերթողի:

Ըլլամ տղադ յես գթուլթյուն, սվ իմ Յեղբայր,  
Ու թախծալիք աշուններն ծաղիկ բերեմ քեզի դալուկ,  
Մըթնշաղեն նրբին շղարշ՝ իբրը պատան քեզի համար,  
Աղջիկներն ալ կանչեմ վոր գան կածաններն լուռ ու ծածուկ,  
Վոր թախծալիք աշուններն ծաղիկ բերեն քեզի դալուկ:

— «Մնաս բարով» ըսենք քեզի ինչպես վոր դուն  
Ըսիր այնպես, այնպես գուրգուր ու զգվագին  
«Բորը Արեխն, յերկնի մովին, անտառներն խոր ու մըթին,

Արտուտներին վստի արտուտ, մանուկներին վառ-խլրտուն»  
Ըսիր այնպես, այնպես գուրգուր ու զգվազին՝

— «Մնաք բարով, մնաք բարով...»

Կը կոծե խուցս անձրեը պաղ ու տրտմական.  
Ծաղկուն ծառերն իմ պարտեղիս՝ լ՛սւո՛ կը խոկան,  
Ու կը կանչե ձայնը նորեն, ձայնը գուժկան,  
— «Անի չի կս. Անի մեռավ, տարին արդեն.  
Ծաղկուն ծառերն իմ պարտեղիս՝ լ՛սւո՛ կը խոկան...:—

## Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Հովհ. Թումանյանի Հիշատակին

Մեզմե՛

Մեկնեցավ Ան,—

Բանաստեղծը մեծ ու անըմամ:

Մեկնեցավ՝

Տեսիլի մը պես պերճ ու պայծառ...

Միջոցին մեջն լուսակոծ,

Միջոցեն լուսապար՝

Մեկնեցավ:—

Մինչ, հիմա,

Մեր բոլորը—չորս,

Մեր բոլորը ծով ու ծիրանի՝

Կը մխան Արևն ու Արևելքը...

Յեվ յերբ, ալ

«Յերկրից անցվոր Յերկրի փառքին անհաղորդ ե իր հոգին»՝

Ճամբուն վրա ամեն հսկող ու հոգի

Կը փութան մոլորակե—մոլորակ,

Կը հասնի, կողջունե Ջախ, կը փարի,

Կուտա համբույր հրեղեն,

Կըլլա բոցեղ բոլնկո՛ւմ...

Մինչ, հոն, Լոսիի աչքերը գարուն,

Լեռները լուո՛

Լալով կերթան փրփրալեն.—

Իսկ ցողաշար առտըվան գիշերագեղ աղջիկներ՝

Կըսեն տրտում տաղերգեր,

Կերգեն Սուգի մեղեղի՝

Ամեն դի, ամեն դի...

— «...Ափսոս բոյիդ թելիկ—մելիկ,

Ափսոս եղ ծով աչերին...»—

...Անդարձ՝

Գնաց ու ըմպեց բաժակն իմաստուն, —

Անդունդին, Խորհուրդին,

Յեզ ծովուն Կապույտն ու ցորյանին Վոսկին զըվարթուն:—

Ունկընդրելեն համանվաղն արշավ

Տարածութենե—տարածություն՝

Չափեց Անչափելին անչափ,

Ու անեզրին ծոց՝

Յեղավ բոց,

Ժամ ու ժամանակ ծրփանուտ,

Հեղեղ՝

Վոր արշավե—արշավ լուսարշավ՝

Կ'ընթանա՝ . . .

Մինչդեռ վար,

Լոռիի լանջերուն արշալույս՝

Յելեր կուգան

Հեքիաթի հրաշք հերոսներու պես

Վես՝

Լոռեցին արի, իգիթները փառք,

Կուգան մանուկներ՝ ծաղիկներ ու ծիլ,

Ծերեր տխրաթե,—ձյունեղեն ու ձյուն,

Կուգան հովիվներ, հովվուհին սրինգ՝

Թափելու վրան արցունք աղամանդ

Ու բույրերը բարկ,

Ծաղիկներ ծաղիկ՝ սարերուն անույշ.

Կանչելու ձայնով հարազատ այնքան,—

—«Մեր սիրտեն յելած՝ տուն դարձիր, «արի»՝ . . .

(—Ավանդ, ավանդ ու բյուր անգամ բարե:—)

Ո Ր Ե Ր՝ Ն ՈՐ...

4.

Թիֆլիս

(1922—1925)

Զ Ա Ր Թ Ո Ն Բ

Մեկը՝  
Ուժգնորեն խփեց,  
Խփեց  
Գանկիս ծանր դրանը...

— «Հէյ, քնած ես դեռ.  
Գուցե գեշեր ե նորեն.  
Յնչորս ե.  
Կը մրսիս.  
^ . ^ . ^ .

— Յեյ,  
Արթնցիւր,  
Արթուն կաց,  
Ուշ ե . . .  
Վաղուց ե արդեն,  
Վոր վառեր ենք ջահերը մեր . . .  
Մենք,—  
Բուրս, բուրս, բուրս .  
Մենք ուխտավորներ ենք,  
Յերգիւր ենք. —

(Կը լսե՞ս

Փլուզումները բարձունքներուն . . .)

— Դեհ,

Վեր,

Վեր,

Վեր կաց . . .

Յեղիւր ընկերը մեր.

Միացիւր մեզի՛

Վոր տանինք քեզ

Գալիքին գոռ ու գեղեցիկ. . . :» —

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

(Հատված)

— «Հանուն անհուն Վրեժին,

Ապագային տեսլավա՞ն՝ մարտադաշտերը մեզի:

(Կընդնշմարե՞ք մեզի հետ ինչպես Անի կը հուզի  
Բյուր ծալքերով ծփանուտ, արշալույսով բեհեզի:)

Մենք կը բաղձանք՝ արյուններ փառքին նըման ջրվիժին,

Հանուն անհուն Վրեժին, հանուն պայծառ Վրեժին.

Մենք աննվաճ ու անթիվ՝ ծնած ծովեն յերկաթին,

Ծնած հողեն հեռաձիգ, հովիտներեն յերգեցիկ. . .

Մահադաշտերը մեզի, մարտադաշտերը մեզի: —

Մենք՝ վառեր ենք հնավանդ

Ամեն դրոշ ու թաղար,

Ու մըրրկին մեր հոգին՝

Կուտա «անմեռ» հիշատակ,

Յե՛վ կը վառե խաղաղիկ

Հին ու թիթե՛ռ խաղալիք:

Յե՛վ ցամաքեն մինչև ծով,

Ծովեն յերաշտն ավազի՛

Մարտադաշտերը մեզի, մահադաշտերը մեզի: —

Մենք՝

Պաղատանք, պատարագ

Միկարի պես ծխեցինք.

Կը բարձրանա մեր հոգին յերկինքներե նոր-յերկինք.

Մենք՝

Աստըծո արյունն ալ ըզմայլանքով խըմեցինք. . .  
 Դաշտ ու դարերը մեզի,  
 Դար ու դաշտերը մեզի,  
 Իսկ դաշտերեն առաջ դեռ՝  
 Մարտադաշտերը մեզի . . .

— Ո՛,

Յերբ ակոս առ ակոս,

— Ո՛,

Յերբ յերկիր առ յերկիր,

Աշտարակե—աշտարակ

Մենք հնձելեն արշավենք,

Հրանձրեկենք մոլեգին,

Թող մեր հոգին՝ բոցարշավ

Հոկտեմբերովս արբենս . . .

Յեթե նույնակ՝

Դարձեն հետո մեզ վրա

Պատառ մը լաթ չմնա,

Ծվեն մը ծույլ՝ չդողս,

Ու ձյուներուն տակ ցրտին՝

Մեր սրտակիցն ու ընկեր

Արյունագեղ ե ինկեր,

Արևծարավ՝ կը մխս . . . . .»

922 Հոկտ. (Թիֆլիս)

## Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ը Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի

Վահրավ Գայֆեճյան նկարիչ ընկերոջս

Մշուշին մեջ կապույտ ու վարդ,

— Նա,

Կայարանն ե գվարթ,

Կայարանը—թափ ու թին,

Կայարանը—սիրտ բաբախուն,

Կայարանը—ազամորեն վան

Ու ցանց ցընծաձիգ...

Ծանր ե շողեկաթսանն ալ շան,

Շան ու ծանր,

Վոր արշավե պիտի հիմա,

Վոր արշավե ու հեա,

Ու դողացնե գիծերն իր

Յեվ Յերկիր՝

Հա, հա...

Ու բոցերը փողփողուն՝

Ճաճանչեն պիտի

Ամեն հույս ըսպասուն...

Բոցերը լույս ու լեզու ու լեզվակ.

Բոցերը—սուր սայրասուր,

Բոցերը նիզակ՝

Զիկ—զակ...

— Ո՛ր,

Դեմքերը իր կրանիտ,  
Դեմքերը ձույլ վոսկի  
Ու լեռ լազուր,  
Դեմքերը յերազ՝  
Բոց յերազին մեջ արձան.  
Ու ձայն՝  
Հեղակարծ անձայն...

Ու աշունն ալ թերթ-թերթ վոսկի,  
Աշունը հովիվ խարտյաշ,  
Սրինգ ու սույլ,  
Վոր կը սուլե՛, կորորե՛  
Ու կը մնա անձայն՝

Յերբ մշուշին մեջ կապույտ ու վարդ՝  
Կը թնդան կայարանը զվարթ,  
Կայարանը սիրտ բաբախուն  
Ու ցանց՝ ցնծածիկ...

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Voici un auroral soleil...  
Emile Verhaeren

— Բեր

Համբուրեմ ճակատդ արնւ,  
Ճակատդ՝  
Շքեղորեն Մասիս,  
Ճակատդ ճյունաթանգ,  
Ճակատդ՝  
Պսակ աղամանդեղեն,  
Հրեղեն,  
Ճակատդ  
Լույս ըսպառնական՝  
Շեմին  
Արևելքին...

— Բեր

Ու թող համբուրեմ  
Իմ շուրթերուս արյունովը՝  
Շուն...

— Բեր

Համբուրեմ Հողդ՝  
Հողի յերկունքովն ապագան.  
Հողդ վարուն,  
Հողդ ահոս առ ահոս քրտինք,  
Հողդ բույր ու բերկրանք

Յեվ բերք-բարություն:  
 Հողդ Ուխտ հաշտության,  
 Հողդ ցորյանի ծովեր անձիր,  
 Հողդ աշուն վոսկեվարար...:—

Յես՝  
 Քու գավակն եմ  
 Նսեմ,  
 Յես քու Չայնը կը լսեմ  
 Ամեն որ,  
 Ամեն ժամ,  
 Ամեն վայրկյան:—

Յես՝  
 Կը սիրեմ Քեզ  
 Կապույտին պես,  
 Մոր մը պես,  
 Կը սիրեմ գյուղերդ,  
 Հյուղերդ հեռանիստ,  
 Կը սիրեմ հողվորդ հուժկու,  
 Ու լույսը լույս ճրագիդ,  
 Վոր շեշտ կը նայի աչքերուս,  
 Հոգիիս  
 Յեվ կը կանչե գիս...

Կը սիրեմ հարսներդ,—  
 Ճառագայթ ճառագ,  
 Հարսներդ՝  
 Չարդոսկի զընդուն,

Կը սիրեմ մանուկներդ թնւխ,  
 Արևիսչ,  
 Աղջիկներդ՝  
 Պաշխաչ:—

Կը սիրեմ ծերերդ՝  
 Կքած լուծերուն տակ որերուն,  
 Ծերերդ՝  
 Բերդեր փլած  
 Արևներուն տակն իրենց...

Չայնը կը սիրեմ Չուրերուդ,  
 Աղաղակներդ առաքվան,  
 Որորը սրինգներուդ,  
 Իրիկուններդ հարավի  
 Յեվ հոտերդ  
 Փուր ու փրփուր...:—

\*  
 \*  
 \*

... Մշուշ եր, մեզ եր  
 Ու տագնապ եր ժանգ:  
 Գնաց,  
 Անցավ,—  
 Թեթևացավ...  
 Իսկ հիմա՝  
 Կողերը քու  
 Կուն են,—  
 Պողպատ,  
 Հզոր ե դաշնը քու,  
 Չորավոր.

Անխորտակ ե ճակատը քու,—  
Ապառաժակերտ.  
Փռչի յե, անհետ ե  
Հրդեհը հորդաններուն:

(Բռունցք չկա սե...)

... Արդեն լույս ե,  
Փայմն ե Հարթոնքի) =  
Արդեն լույս ե  
Բոցալույս:—

\* \* \*

— Բեր.

Բեր,  
Վոր համբուրեմ ճակատդ արն  
Ճակատդ՝  
Շքեղորեն Մասիս,  
Ճակատդ ձյունաթագ,  
Պսակ ադամանդեղեն,  
Հրեղեն...  
Ճակատդ  
Լույս ըսպառնական  
Շեմին  
Արնեթին...:—

1924 նոյ. (Թիֆլիս)

Ն Ա Մ Ա Կ՝

Բանաստեղծ Յեղիշե Զարենց —ին

Ձյուն ե այսոր,  
Ձյուն՝ ցնծուն,  
Ձյուն՝ անձայն:  
Նստեր եմ իմ լուռ, անարև.  
Բայց հողին իմ՝  
Դեռ կ'արևե  
Մեր հարավի վառման Արև:—

Ու կը հիշեմ.—

Ճամբան՝ դաշտեր ձյունաթորուն,  
Խաղաղ, խորին ու ըսպասուն,  
Ճամբան՝ գարնան յերագով քուն:

Ճամբան յերկաթ գիծերով վերք,  
Ճամբան ցնցոււմ, իրարանցում,  
Ճամբան՝ բերկրանք բազուկներու:

Դաշտը Շիրակ՝ հսկայաթև,  
Հսկայորեն յերախը բաց,  
Ծարավահյուծ սիրտը՝ ծարավ. . .

— «Փութով, շուտով, կնայ ե, ըշտապ՝ . . .  
Շիրջրանցքը թող վարարե դաշտերը իմ,  
Շիրջրանցքը թող վողողե հողերը իմ,  
Յես որերե, տարիներե ի վեր պապ եմ.  
Յես կը սպասեմ . . . »

(Ու ձայնը իր զեռ կը հնչե ականջին իմ,  
 Ձայնը հողին ու հողվորին իր մտերիմ,  
 Ձայնը իր ձիգ:—)

Ձորն ե լոռի,—անդունդ ու խոր,  
 Ձուրեր խըշշան, ջուրեր թըշշան,  
 Ու լոռեցին հաղթ ու հրսկա::

Իսկ պոյետի հողին՝ վորպես  
 Անմահ ժպիտ ու արեգակ՝  
 Բըռնկեր ե բարձունքներուն:

Յե՛վ իրիկունն այնպես պայծառ,  
 Ծիրանեծուփ կը բացվի վեր՝  
 Վոր կարծես թե բանաստեղծը  
 Ինքը հիմա՝  
 Դեմը՛դ կուգա . . .

Ճամբան՝ գիշեր ձյունածրար,  
 Հանգիստ ու նինջ ու անխուփ,  
 Ճամբան՝ գյուղեր հազարացիր:

Ճամբան՝ հազար բոցեղ ճրագ,  
 Ու հեռականչ սիրտեր կրակ,  
 Ճամբան՝ լուսնի վերալի գանկ:

Ճամբան՝ արշավ անիվներու,  
 Յե՛վ գնացքին շունչը բոցե,  
 Վոր ուղեղիս կտավին վրա

Նայիրական մեր նոր յերկրին  
 Գոռ Գալիքը կուրվագծե. . .

Մինչդեռ, հեռուն,  
 Արդեն լուսուն,  
 Յեղբայրական յերկիր մի այլ՝  
 Մեզ կ'ընդունի յեղբայրորեն  
 Գիրկը իրեն.—

— გაუმარჯობს საბჭოთა საქართველოს!

(— Վողջնւյն Վրաստանին խորհրդային:)

Հունվր. 1925 (Թիֆլիս)

## ԱԼ. ՄԻԱՍՆԻԿՅԱՆ

(Մահերգ՝ մասսայական)

«Մեկ կանանչ ու կտրիճ յեզենի-  
այրեցավ»

Խոսք՝ խոցված սրտի:

Ա.— Չարաղէտ...

(1925 թ. Մարտ 22,  
Առավոտ. ժամը 12 անց 20,  
Թիֆլիս, որ՝ տժգուշն.—)

Հանկարծ, հանկարծ,  
Վայրկյանին մեջ մեկ՝  
Բըռնկեցավ «Յունկերսը»,  
Յեղավ «Չահ կենդանի»,  
Յեղավ բոց ու լեզու բոցեղեն,  
Յեղավ բեկոր—բյուր,  
Յեղավ մոխիր—գորշ,

Յեվ, հիմա...

— Չկա այլևս Ան,  
— Անգուգականը,  
— Միասնիկան,  
— Մարտունին,  
— Այլոշա սիրելին...

Բ.— Ինչպէս թե չկա՞. . .  
Գ.— Կա, ըսեք կա, պիտի գա,  
Դ.— Թող գա, թող գա,  
Ե.— Թող գա Ան, Հսկան,  
Զ.— Ընկերը մեծ,  
Ը.— Միասնիկանը մէր...

Ա.— Չեք ուզեր լսել,  
Չեք կրնար հավատալ,—  
— Այո, դժվար ե, դանն ե,  
Ահավոր ե գուժն այս:  
Բայց տեսեք թերթերը ձեր,—  
«Խորհրդային Հայաստանը»,  
«Մարտակոչը»,  
Կամ՝  
«Заря Востока»-ն:—

Ահա ինքը,—նկարն իր՝  
Սևածիր,  
Ահա հայացքը՝ հատու,  
Դեմքը թուխ ու արու,  
Բերանը՝ ժպիտ-մանուկ,  
Իսկ հետո մահազդը՝  
Չարհո՛ւր...

ԱՅԼԵՎՍ ՉԿԱ՝ ՄԻԱՍՆԻԿՅԱՆ  
(ՄԱՐՏՈՒՆԻ)

Սուգ ե հանուր,  
Կը սգա՞ թիֆլիսը գեղանի,

Յնցվեր ե Հայաստանը Խորհրդային,  
 Արյուն կերթա սիրտեն իր՝  
 Տաք—տաք:  
 Վորբ ե Ան հիմա,  
 Զուրկ ու զարնրված:  
 Թախիծ ունի Ադրբեջանը,  
 Տխուր ե  
 Ս. Խ. Հ. Միությունը մեծ:  
 Ռազմիկն իր՝  
 Ինկավ...  
 Սուգ ե  
 «Սահման»-են իսկ անդին:

(...«Յելիր, ում կյանքը անիծել ե,  
 Ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ...»  
 «Դուք զոհվեցիք պայքարին մեջ որհասական,  
 Անշահ սիրով ժողովրդի գործի համար...»

Բյուր ու հազար են յեկեր հարգանքին վերջին՝  
 Հազարներ՝ մեկ-մեկ ընկեր են զրկեր,  
 Հազարներ զրկեր են գիր ու հեռագիր,  
 Հինգ-հարյուր պսակ բերեր են նվեր,  
 Սակայն բացակա դեռ կան միլիոններ  
 Մեր Սուգին ընկեր...

...«Յելիր, ում կյանքը անիծել ե,  
 Ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ...»

«Դուք զոհվեցիք պայքարին մեջ որհասական,  
 Անշահ սիրով ժողովրդի գործի համար...»

Մոտալուտ ե արդեն մութը,  
 Ժամն ե վերջին,—  
 Թնդանոթները կը թնդան,  
 Հրացանները կուտան համազարկ,  
 Շշուկները կը ճշան յեղերորեն,  
 Իսկ պահակները պատվի՝  
 Լուռ են,  
 Արձան են մութ-մարմար:

Բարձրացավ հողաթումբը ցուրտ,  
 Յնւրտ, ցուրտ...  
 Բայց դեռ կը հսկեն պահակներն ընկեր,  
 Պահակներ՝ պատվի,  
 Յեվ ուխտի կուգան,  
 Հարգանքին վերջին՝  
 Հազար ու հազար,—  
 Կին, մանուկ ու ծեր,  
 Բազուկներ՝ ջրուա,  
 Հողվորներ՝ սգովոր...)

\* \*  
 \*

Թ.— Գնաս բարո՞վ Ալյոշա...

Ժ.— Թող հողը թեթև գա քեզ...

ԺԱ.— Կուխտենք ուղիովը քո՝ գնա՛լ...

ԺԲ.— Ավարտել կենդանի գործը քո...

ժԳ.—Մենք սաներն ենք քո...

ժԴ.—Պատկոմներն արի...

ժԵ.—Հավերժ հիշատակ...

. . . . .

Բայց...

Դեռ կանգուն են պահակներն ընկեր։—

Մարտ 925 (Թիֆլիս)

## Մ Ա Յ Ի Ս Մ Ե Կ

Պոլեւարներ բոլոր յեկրների, միացե՛ք

Դուրսը Այսոր՝  
Հեղեղներ են հորդանոս  
Ու ճակատներ՝ մրաձնւփ...  
Այսոր բազուկները ծառացեր են  
Ծով առ ծով.  
Այսոր կաղաղակե Յասուլմն արդար,  
Այսոր՝  
Ցնծություն ե խելագար...

Չեն ճչար Այսոր  
Շչակները սուր.  
Կասեր ե Այսոր ամեն մեքենա,  
Ու լնու են, գարնուր  
Գործարանները,  
Գետնահորերը,  
Կայարանները...

Այսոր գիծ մը կա Աշխարհին ձգված,  
Մեկ Խորհրդագիծ՝  
Միրտերը գողով,  
Մեկ յեղբայրագիծ՝  
Կրակեն ալ շնո...

Յե՛վ կերթան Անոնք,  
Վոր տժգույն են ու տանջահար.

Կերթան բանակ առ բանակ,  
Կերթան

Ու կը նային Արևի՛ն...

Կը նային

Ու խմեն անհագորեն լույսը իր,

Կը խմեն ու կը շնչեն դաշտերը զմրուխտ,

Լեռները լազո՛ւր:

— «Ո՛ր, ինչքան քաղցր ե գուրսը Այսոր»,

— «Ինչքան ծաղիկներ ու ինչքան բուրմուռ»,

— «Ինչքան արև՛ կա Աշխարհիս վրա»...

...Կերթան

Ու կը տանին իբր ազդանշան

Գալիքին, Կուլին ու Հաղթանակին՝

Դրոշներ կարմիր,

Մտի պես կարմիր...

Կերթան,

Կը հեան,

Կը խոսին...

— «Դո՛ւ, նա՛,

Դուք բոլորդ,—

Պալատականներ,

Կամ՝

Արնախում հրեշներ գեղին,

Չցնծա՛ք Այսոր դուք,

Վոչ ալ ծնծղա զարկեք խնդության,

Արթնցեր ենք մենք արդեն,

Չենք ներեր ալ ձեզ,

Չենք կարող,

Չե՛...

Մենք կը հալենք ձեր վոսկիներ

Ծեր

Ու կը լեցնենք տաք-տաք

Վորկորները ձեր՝

Մինչև վոր...

Մինչև վոր հաղենա՛ք...

Դուք պետք ե գիտնաք,

Վոր Աշխարհը այս,

Քաղաքները պերճ,

Տեխնիկան հսկա՝

Մեր իսկ հանճարն են

Ու արյո՛ւնը մեր:—

Մերն են,

Մեզ պիտի լսեն...

Մենք—զանգյուն ու գազ,

Մենք—հալած լավա,

Մենք—նավատորմիդ,

Մենք—սավառնակներ,  
Մենք—հուր հրանոթ...

Պիտի գանք,  
Պիտի գանք,  
Պիտի գանք...

— Ոն, պատրաստ յեղեք:

925, Թիֆլիս



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐԵՆԻ ՅԵՐԳԵՐ

Յերես

1. Մուտք . . . . .	5
2. Ահա գարուն . . . . .	9
3. Դեպի արա՛վ . . . . .	10
4. Ցածություն . . . . .	12
5. Միջորե . . . . .	14
6. Սիրերգ . . . . .	16
7. Արտիս հեա . . . . .	17
8. Ամրան իրիկուն . . . . .	18
9. Ծով, իմ ծով... . . . . .	20
10. Մուրացուհին . . . . .	22
11. Աղերս . . . . .	24
12. Վորբություն . . . . .	25
13. Վերհիշում . . . . .	27
14. Փողոցներ . . . . .	29
15. Զուրերու հեա . . . . .	30
16. Յեղբայրս... . . . . .	31


ՅԵՂԵՎՆԻ

17. Ծովափ . . . . .	35
18. 3 (Շարք) . . . . .	36
19. Արբեցում . . . . .	39
20. Կարոտերգ . . . . .	40
21. Որե՛ր ունիմ... . . . . .	41

22. Հիասթափություն . . . . .	43
23. Դեղին Դղյակին Աղջիկը (շարք) . . . . .	44
24. Հավերժ վայրկյան . . . . .	48
25. Հիստամ. . . . .	49
26. Զուրբերն այս գիշեր . . . . .	50
27. Սուգ . . . . .	51
28. Կանչ. . . . .	52
29. Յերգ արշալույսի (Շարք) . . . . .	54
30. Պայծառ սեր . . . . .	56
31. Անտառերգություն (Շարք) . . . . .	57
32. Միսաք-Մեծարինցին հետ . . . . .	64
33. Սուգ (Վահան Տերյան) . . . . .	65
34. Մեկնում (Հովհ. Թումանյան) . . . . .	67

**ՈՐԵՐ՝ ՆՈՐ...**

35. Զարթոնք . . . . .	71
36. Հոկտեմբերյան . . . . .	73
37. Կայարանը Թիֆլիսի . . . . .	75
38. Հայաստանին՝ Սորհրդային . . . . .	77
39. Նամակ. . . . .	81
40. Ալ. Միասնիկյան . . . . .	84
41. Մայիս մեկ. . . . .	89



« Ազգային գրադարան



NL0366006

